ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

«16» 11 2011 թ. N 76

Լոռու մարզպետ
պարոն Ա.Նալբանդյանին

Կից ներկայացնում ենք Լերմոնտովի համայնքի ղեկավարի թիվ 29 - 35 Որոշումները և ավագանու N 17, 18 , 19 Որոշումները :

Համայնքի ղեկավար՝ Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԱՎԱԳԱՆԻ

« 08 » 11 2011 թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 17

Լերմոնտովո համայնքի 2011Թ ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, ղեկավարվելով «ՀՀ Բյուջետային Համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի Ավագանին Որոշում է հաստատել համայնքի 2011թ-ի բյուջեի փոփոխությունը .

1. Եկամուտների գծով ՝ ընդամենը - 33464.6 հազ.դրամ , այդ թվում՝
   - վարչականի մասով - 18099.1 հազ.դրամ
   - ֆոնդայինի մասով - 15365.5 հազ.դրամ
2. Ծախսերի գծով ՝ ընդամենը - 33464.6 հազ.դրամ , այդ թվում՝
   - վարչական մասով - 18099.1 հազ.դրամ
   - ֆոնդային մասով - 15365.5 հազ.դրամ

Ավագանու անդամներ ՝ կողմ ձեռնպահ դեմ

Վահան Հովսեփյան

Ալեքսեյ Շուտով

Աստղիկ Մկրտչյան

Իվան Բոլոտին

Ռոզա Խեչումյան

Համայնքի ղեկավար ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԱՎԱԳԱՆԻ

« 08 » 11 2011 թ.

## ՈՐՈՇՈՒՄ N 18

Համայնքի ամենամյա գույքագրման արդյունքների մասին

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 հոդվածի 29 կետով , Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի ավագանին որոշում է հաստատել համայնքի սեփականության գույքագրման արդյունքները ՝ որտեղ ավելցուկ և պակասորդ չի արձանագրվել :

| Ավագանու անդամներ՝ | կողմ | ձեռնպահ | դեմ |
|---|---|---|---|
| Վահան Հովսեփյան | | | |
| Ալեքսեյ Շուտով | | | |
| Աստղիկ Մկրտչյան | | | |
| Իվան Բոլոտին | | | |
| Ռոզա Խեչումյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Է.Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԱՎԱԳԱՆԻ

« 08 » 11 2011 թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 19

Վատ կլիմայական պայմանների պատճառով Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի որոշ բնակիչները դաշտից չեն տեղափոխել իրենց բանջարեղենի բերքը : Ուստի ավագանին որոշեց կազմակերպել խմբակային աշխատանքներ բերքահավաքը արագ ավարտելու նպատակով , ներգրավելով համայնքում առկա համապատասխան գյուղ. տեխնիկան :

Ավագանու անդամներ՝ կողմ ծեռնպահ դեմ

Վահան Հովսեփյան

Ալեքսեյ Շուտով

Աստղիկ Մկրտչյան

Իվան Բոլոտին

Ռոզա Խեչումյան

Համայնքի ղեկավար՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

«22» 09 2011 թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 29

Համայնքի 2011 թ-ի բյուջեում եռամսյակային
փոփոխություն կատարելու մասին

Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2011թ-ի բյուջեի բաժին 8 խումբ 2 դաս 4 ծրագիր 51-ի IV-րդ եռամսյակից 20.0( քսան հազար) դրամ տեղափոխել բաժին 8 խումբ 2 դաս 4 ծրագիր 51-ի III-րդ եռամսյակ :

Համայնքի ղեկավար՝ Է.Չախալյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ**

---

«06» 10 2011 թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 30

Նյութական օգնություն ցուցաբերելու մասին

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 34 հոդվածի 5 կետով Լերմոնտովո համայնքի 2011 թ-ի բյուջեի բ. 10 խ..7 դ.1 հոդված 4729-ից համայնքի ներքոհիշյալ բնակիչներին ` համաձայն իրենց դիմումների , ցուցաբերել դրամական օգնություն .

1. Նադեժդա Պետրովնա Շուբինա - 20000 դր.
2. Նինա Վասիլևնա Բելոուսովա - 20000 դր.
3. Եվդոկիյա Իվանովնա Ժիտինա - 20000 դր.
4. Ռոզա Ստեփանի Խեչումյան – 10000 դր.

Ընդամենը ` 70000 (յոթանասուն հազար) դրամ :

Համայնքի ղեկավար ` Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

«24» 10 2011 թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 31

Նյութական օգնություն ցուցաբերելու մասին

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 34 հոդվածի 5 կետով Լերմոնտովո համայնքի 2011 թ-ի բյուջեի բ. 10 խ..7 դ.1 հոդված 4729-ից համայնքի ներքոհիշյալ բնակիչ Եկատերինա Սերգեևնա Լուտկովային ` համաձայն իր դիմումի , ցուցաբերել դրամական օգնություն 15000(տասնհինգ հազար) դրամի չափով :

Համայնքի ղեկավար` Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

«31» 10 2011 թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 32

Համբարձում Մինասի Սիմոնյանին
աճուրդ-վաճառքով հողամաս օտարելու մասին

Հիմք ընդունելով Լերմոնտովո համայնքի աճուրդային հանձնաժողովի՝ հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու մասին 2011թ-ի հոկտեմբերի 31-ի թիվ 02 արձանագրությունը , ղեկավարվելով Հողային օրենսգրքի 70րդ հոդվածով

Որոշում եմ՝

1. Լերմոնտովո համայնքի սեփականություն հանդիսացող 405քմ հողամասը (ծածկագիր 06-043-0021-0018) 99000 (իննսուն իննը հազար) դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Համբարձում Մինասի Սիմոնյանին ՝ գյուղարտադրական կառուցապատման նպատակով :

2. Համայնքի հողօգտագործման բաժնին հանձնարարել 10օրյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Համբարձում Մինասի Սիմոնյանի հետ կնքել հողամասի առ ու վաճառքի պայմանագիր:

3. Պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում:

4. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:Պայմանագիրը մեկ ամսվա ընթացքում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման չներկայացնելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

Գյուղապետ Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

«08» 11 2011 թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 33

## ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2011թ. ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն "ՀՀ բյուջետային համակարգի մասին" օրենքի 33 հոդվածի և առաջնորդվելով Լերմոնտովո համայնքի 2011 թ-ի փոփոխված բյուջեն հաստատելու մասին Ավագանու 08.11.2011 թ-ի «Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2011թ-ի փոփոխված բյուջեն հաստատելու մասին» թիվ 17 Որոշմամբ.

1. Հաստատել համայնքի 2011 թ-ի փոփոխված բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:
2. Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2011թ-ի ծախսերի նախահաշիվները ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

Համայնքի ղեկավար Է.Զախայան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

№ 34

«09» 11 2001թ.  Հեռ.

# ՈՐՈՇՈՒՄ

Հողհատկացման հիմքերը վերականգնելու և հողօգտագործման իրավունքը ձևակերպելու մասին

Քաղաքացի Էրիկ Համբարձումի Զաքարյանը դիմել է գյուղապետարան իր պատկանող Բկ. 021-006 (007-008) կադաստրային կից հողամասի հողօգտագործման իրավունքը ձևակերպելու խնդրանքով :

Է. Հ. Զաքարյանը փաստացի զբաղեցնում է 949 ք.մ. հողամաս, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում :

1. Ղեկավարվելով «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետով՝ վերականգնել Է. Հ. Զաքարյանի նախկին հողհատկացման հիմքերը 949 ք.մ. մակերեսի չափով, որը օրենքի [illegible] սեփականության իրավունքով փոխանցվում է Է. Հ. Զաքարյանին
2. Հողամասի սահմանները որոշվում են գյուղապետարանի կողմից 949 ք.մ. մակերեսով [illegible] համար տրված գլխավոր հատակագծով :
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումում:

Հ Հ Լոռու մարզ

Է. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

«14» 11 2011 թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 35

## Նորածին երեխաների ծնողներին նյութական օգնություն ցուցաբերելու մասին

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և համաձայն Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2011թ-ի փետրվարի 23-ի Ավագանու թիվ 02 Որոշմանը համայնքի բնակիչ Հայարփի Ալֆրեդի Խնկոյանին ցուցաբերել նյութական օգնություն ՝ 10000 (տասը հազար) դրամի չափով ՝ նորածին երեխայի խնամքի համար .

Գյուղապետ ՝ Է.Չախմախյան